ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

Ք. Երևան 27.12.2018թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ԳԲԽ-ԱՄ-2018/110

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Միհեր Անանյանս, քննելով «Գլոբալ Լիֆտ Կոմպլեկտ» ՍՊԸ-ի կողմից 17.12.2018թ. ներկայացված բողոքը (այսուհետ նաև՝ ԳԲԽ-ԱՄ-2018/110 բողոք) և կից փաստաթղթերը, պարզեցի հետևյալը.

1. «Գլոբալ Լիֆտ Կոմպլեկտ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.

«Գլոբալ Լիֆտ Կոմպլեկտ» ՍՊԸ-ն (այսուհետ նաև՝ Ընկերություն) 17.12.2018թ. ներկայացրած բողոքով հայտնել է, որ Ընկերությունն ի թիվս այլ մասնակիցների, մասնակցության հայտ է ներկայացրել «Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ի (այսուհետ՝ Պատվիրատու) կողմից հայտարարված թիվ «ԵՋԷԿ-ԳՀԱՇՁԲ-18/53» ծածկագրով գնանշման հարցման ձևով վերելակների ձեռքբերման, մոնտաժման,

նախագծման, գործարկման և կարգաբերման աշխատանքների գնման ընթացակարգին (այսուհետ՝ ընթացակարգ):

Գնահատող հանձնաժողովի 02.11.2018թ. թիվ 3 արձանագրության 1.1 կետով մերժվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից Ա/Ձ Արմեն Սարիբեկյանի ներկայացրած հայտը և նույն արձանագրության 1.2 կետով առաջին տեղ զբաղեցրած մասնակից է ճանաչվել «Գլոբալ Լիֆտ Կոմպլեկտ» ՍՊԸ-ն:

Թիվ 3 արձանագրության 1.3 կետով որոշվել է Ընկերությունից պահանջել սահմանված ժամկետում ներկայացնել հրավերով և հայտով սահմանված որակավորման փաստաթղթերը և միաժամանակ Կարգի համաձայն՝ համապատասխան հարցում ուղարկել ՀՀ ՊԵԿ:

08.11.2018թ. Ընկերությունը էլեկտրոնային փոստի միջոցով հանձնաժողովին է ներկայացրել համապատասխան փաստաթղթերը, սակայն սխալմամբ ի թիվս այլ փաստաթղթերի ուղարկել է աշխատանքային (սևագիր) տարբերակով կազմված հաշիվ-ապրանքագիր, որի թիվը տարբերվում է իրական հաշվի ապրանքագրի թվից:

Նույն օրը Ընկերությունն էլեկտրոնային փոստի միջոցով հանձնաժողովին տեղեկացրել է, որ նախորդ նամակով ուղարկված փաստաթղթերը չընդունել ի գիտություն և 09.11.2018թ. ուղարկել է նոր փաստաթղթեր:

09.11.2018թ. հանձնաժողովը հաստատել է փաստաթղթերի ստացումը:

12.11.2018թ. թիվ 4 արձանագրության 1-ին կետով հանձնաժողովը նշել է, որ բողոքաբերի նախորդ տարվա պարտավորությունները գերազանցում են ակտիվները, ինչը հիմք է հայտը մերժելու համար:

Նմանատիպ հիմնավորում է ներառված նաև հանձնաժողովի 30.11.2018թ. թիվ 5 արձանագրության 1.2 կետում, որով մերժվել է Ընկերության հայտը:

06.12.2018թ. թիվ 6 արձանագրության 1.2 կետով հանձնաժողովը որոշել է ընթացակարգը հայտարարել չկայացած:

Ընկերությունը գտնում է, որ հանձնաժողովի թիվ 4 արձանագրության 1-ին, 5-րդ արձանագրության 1.2 և թիվ 6 արձանագրության 1.2 կետերը կազմված են ՀՀ գործող օրենսդրության և ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված

«Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ) պահանջների խախտմամբ:

Կարգի 44-րդ կետի համաձայն՝ Կոմիտեն սույն կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետով նախատեսված հարցումն ստանալու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով տրամադրում է հարցման մասին տեղեկատվություն: Սույն կետով սահմանված ժամկետում կոմիտեից տեղեկատվության չստացման դեպքում մասնակցի ներկայացրած հայտարարությունները համարվում են իրականությանը համապատասխանող: Եթե կոմիտեի կողմից սահմանված ժամկետից ուշ ներկայացված տեղեկատվությամբ արձանագրվում է, որ առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցել է օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ կամ չի բավարարում հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի պահանջները, և պայմանագիրը կնքված չէ, ապա տվյալ մասնակցի հայտը մերժվում է: Եթե սահմանված ժամկետում տրամադրված տեղեկատվության արդյունքում մասնակցի ներկայացրած հայտարարությունը որակվում է իրականությանը չհամապատասխանող, ապա հայտերի գնահատման նիստում հանձնաժողովի որոշմամբ տվյալ մասնակցի հայտը մերժվում է՝ անկախ մասնակցի կողմից կոմիտեի տրամադրած տեղեկատվությունից տարբերվող տեղեկատվություն ներկայացվելու հանգամանքից: Սույն կետով նախատեսված որակավորման չափանիշի գնահատման ժամանակ հաշվի է առնվում սույն կարգի 47-րդ կետով նախատեսված ընթացակարգը:

Կարգի 47-րդ կետի համաձայն՝ առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից փաստաթղթերն ամբողջական չներկայացվելու, ինչպես նաև ներկայացված՝ ներառյալ կոմիտեի կողմից տրամադրված որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերի, իսկ ապրանքների գնման դեպքում նաև սույն կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթղթի գնահատման արդյունքում հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ արձանագրվելու դեպքում հանձնաժողովի քարտուղարը նույն օրն էլեկտրոնային եղանակով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով մեկ

աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը: «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի մասով արձանագրված անհամապատասխանությունը կարող է շտկվել ինչպես առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից կոմիտեից ստացված գրավոր տեղեկատվությունը գնահատող հանձնաժողովին ներկայացմամբ, այնպես էլ կոմիտեի կողմից տրված նոր տեղեկատվությամբ: Ընդ որում, գնահատող հանձնաժողովի կամ քարտուղարի կողմից կոմիտեին կրկնակի հարցում չի կատարվում:

Հանձնաժողովը բողոքաբերի հայտի մերժման համար հիմք է ընդունել ՀՀ ՊԵԿ-ի կողմից տրամադրված տեղեկատվությունն այն մասին, որ բողոքաբերի՝ հայտը ներկայացնելու տարվան նախորդ տարվա ընթացքում պարտավորություններն ակտիվներին գերազանցելու փաստը, սակայն հանձնաժողովի քարտուղարը չի կատարել Կարգի 47-րդ կետի պահանջը, այն է՝ բողոքաբերին նույն օրը չի ծանուցել առկա անհամապատասխանությունների մասին և վերջինիս հնարավորություն չի տվել դրանք շտկելու համար, ինչը հանգեցրել է Կարգի խախտմամբ որոշումների կայացմանը:

ՀՀ Սահմանադրության 59-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի տնտեսական, ներառյալ ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու իրավունք: Այս իրավունքի իրականացման պայմանները և կարգը սահմանվում են օրենքով:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 2-րդ հոդվածի համաձայն՝ ձեռնարկատիրական է համարվում անձի ինքնուրույն, իր ռիսկով իրականացվող գործունեությունը, որի հիմնական նպատակը գույք օգտագործելուց, ապրանքներ վաճառելուց, աշխատանքներ կատարելուց կամ ծառայություններ մատուցելուց շահույթ ստանալն է:

Տվյալ պարագայում Ընկերությունը շահույթ ստանալու ակնկալիքով մասնակցության հայտ է ներկայացրել, սակայն գնահատող հանձնաժողովի ոչ իրավաչափ և կանխակալ գործողությունների արդյունքում զրկվել է այն նյութական բավարարման հասնելու օրինական հնարավորությունից, ինչի ակնկալիքով վերջինս մասնկացել է տվյալ ընթացակարգին:

«Գլոբալ Լիֆտ Կոմպլեկտ» ՍՊԸ-ն բողոքով խնդրել է՝

1. Պարտավորեցնել գնահատող հանձնաժողովին փոփոխել 30.11.2018թ. թիվ 5 արձանագրության 1.2-րդ կետը և կարգի 47-րդ կետով նախատեսված կարգով հնարավորություն ընձեռնել բողոքաբերին շտկելու առկա անհամապատասխանությունը.

2. Պարտավորեցնել գնահատող հանձնաժողովին ընդունել 30.11.2018թ. թիվ 5 արձանագրության 1.3-րդ կետը վերացնելու մասին որոշում.

3. Պարտավորեցնել գնահատող հանձնաժողովին ընդունել 06.12.2018թ. թիվ 6 արձանագրության 1.2 կետը վերացնելու մասին որոշումը:

Ընկերությունը, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 19.12.2018թ. ժամը 12:00-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով պնդել է բողոքով ներկայացված դիրքորոշումը:

2. «Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված դիրքորոշումը և հիմնավորումները.

«Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ն ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված գրությամբ հայտնել է, որ հայտի մերժման համար հիմք է հանդիսացել ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշման 44-րդ կետը՝ այն է «Կոմիտեն սույն կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետով նախատեսված հարցումն ստանալու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով տրամադրում է հարցման մասին տեղեկատվություն: Սույն կետով սահմանված ժամկետում կոմիտեից տեղեկատվության չստացման դեպքում մասնակցի ներկայացրած հայտարարությունները համարվում են իրականությանը համապատասխանող: Եթե կոմիտեի կողմից սահմանված ժամկետից ուշ ներկայացված տեղեկատվությամբ արձանագրվում է, որ առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցել է օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ կամ չի բավարարում հրավերով «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի պահանջները, և պայմանագիրը կնքված չէ, ապա տվյալ մասնակցի հայտը մերժվում է: Եթե սահմանված ժամկետում տրամադրված տեղեկատվության արդյունքում մասնակցի ներկայացրած հայտարարությունը որակվում է իրականությանը չհամապատասխանող, ապա հայտերի գնահատման նիստում հանձնաժողովի որոշմամբ տվյալ մասնակցի հայտը

մերժվում է՝ անկախ մասնակցի կողմից կոմիտեի տրամադրած տեղեկատվությունից տարբերվող տեղեկատվություն ներկայացվելու հանգամանքից: Սույն կետով նախատեսված որակավորման չափանիշի գնահատման ժամանակ հաշվի է առնվում սույն կարգի 47-րդ կետով նախատեսված ընթացակարգը», ինչպես նաև 67-րդ կետը «Գնահատող հանձնաժողովը կարող է ստուգել մասնակցի ներկայացրած տվյալների իսկությունը՝ օգտագործելով պաշտոնական աղբյուրներից ստացված տվյալներ կամ դրա մասին ստանալով իրավասու մարմինների գրավոր եզրակացությունը: Նման հարցում ուղարկվելու դեպքում համապատասխան պետական և տեղական ինքնակառավարման մարմինները հարցումն ստանալու օրվան հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում տրամադրում են գրավոր եզրակացություն: Եթե մասնակցի ներկայացրած տվյալների իսկության ստուգման արդյունքում տվյալները որակվում են իրականությանը չհամապատասխանող, ապա տվյալ մասնակցի հայտը մերժվում է»:

Ընկերության կողմից ներկայացված հայտը հանձնաժողովի կողմից մերժվել է՝ պահպանելով ՀՀ կառավարության որոշման վերոնշյալ կետերը: Միաժամանակ Պատվիրատուն հայտնել է, որ տվյալ Ընկերության կողմից որպես մասնագիտական փորձառություն ներկայացված նախկինում կատարված պայմանգրի հանձնման-ընդունման արձանագրությունը նույնպես չի համապատասխանում իրականությանը, այսինքն մասնակցի կողմից ներկայացվել են կեղծ փաստաթղթեր, որոնց իսկությունը ստուգելուց հետո հանձնաժաղովը մերժել է հայտը: Իսկ Ընկերության կողմից ներկայացված այն հիմնավորումը, որ հանձնաժողովը պետք է մասնակցին տար մեկ աշխատանքային օր ժամկետ՝ շտկելու անհամապատասխանությունները, նախ վերոնշյալ կետերը Պատվիրատուի կարծիքով ոչ թե անհամապատասխանություններ են՝ այլ դիտավորյալ փաստաթղթի կեղծում, քանի որ դա չէր կարող պատահականության սկզբունքով լինել ու պատահական կեղծվեին մի շարք փաստաթղթեր և հաստատվեին ստորագրությամբ ու կնիքներով՝ այդ թվում նաև էլեկտրոնային թվային ստորագրությամբ: Միաժամանակ չի բացառվել նաև այն հանգամանքը, որը թեև Պատվիրատուի կարծիքով օրենքով ու կառավարության որաշմամբ ամրագրված չէ, որ տվյալ դեպքում մասնակցին ժամկետ տրամադրվելու դեպքում նորից կարող էր ներկայացվել նմանատիպ փաստաթղթեր:

Պատվիրատուն հայտնել է, որ գնման ընթացակարգը 06.12.2018թ. ամբողջությամբ հայտարարվել է չկայացած:

Ելնելով վերոգրյալից «Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ն հայտնել է, որ Ընկերության կողմից ներկայացված բողոքը անհիմն է և ենթակա է մերժման:

«Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 19.12.2018թ. ժամը 12:00-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցիչների մասնակցությունը, ովքեր առարկել են բողոքի դեմ՝ հայտնելով, որ գնահատող հանձնաժողովը կասկածելի է համարել Ընկերության կողմից ներկայացված որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը: Միևնույն ժամանակ Ընկերությունը 08.11.2018թ. ներկայացրել է նոր փաստաթղթեր՝ խնդրելով հիմք ընդունել այդ փաստաթղթերը: Ընկերության հայտի մերժման համար հիմք է ընդունվել վերջինիս կողմից ներկայացված հանձնման-ընդունման ակտի կեղծ լինելը, ինչպես նաև Ընկերության հայտը ներկայացնելու տարվան նախորդող հաշվետու տարիների ընթացքում ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքների անհամապատասխանությունը:

Բողոքը քննող անձի այն հարցին, թե արդյոք «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշում անհամապատասխանություն արձանագրելուց հետո Ընկերությանը ծանուցվել է անհամապատասխանությունը շտկելու վերաբերյալ՝ Պատվիրատուի ներկայացուցիչը հայտնել է, որ Ընկերությանը չի ծանուցվել: :

3. ԳԲԽ-ԱՄ-2018/110 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

ԳԲԽ-ԱՄ-2018/110 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. «Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ի կողմից «Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ի կարիքների համար վերելակների ձեռքբերման, մոնտաժման, նախագծման, գործարկման և կարգաբերման աշխատանքների ձեռքբերման նպատակով հայտարարվել

է «ԵՋԷԿ-ԳՀԱՇՁԲ-18/53» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով «Գլոբալ Լիֆտ Կոմպլեկտ» ՍՊԸ-ն հայտ է ներկայացրել:

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 02.11.2018թ. ժամը 10:00-ի նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ «Գլոբալ Լիֆտ Կոմպլեկտ» ՍՊԸ-ն ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից:

3. ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 44-րդ կետի հիման վրա 06.11.2018թ. տրամադրված եզրակացության համաձայն՝ ***«Գլոբալ Լիֆտ Կոմպլեկտ» ՍՊԸ-ի հայտը ներկայացնելու տարվան նախորդող տարվա ընթացքում ակտիվների հաշվապահական հաշվեկշռային արժեքը կազմում է 88 555 421 ՀՀ դրամ, իսկ պարտավորությունների հաշվապահական հաշվեկշռային արժեքը՝ 103 764 647 ՀՀ դրամ:***

4. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 30.11.2018թ. ժամը 10:00-ի նիստի թիվ 5 արձանագրության 1.2-րդ կետով կայացված որոշմամբ «Գլոբալ Լիֆտ Կոմպլեկտ» ՍՊԸ-ի հայտը մերժվել է այն հիմնավորմամբ, որ Ընկերության հայտը ներկայացնելու տարվան նախորդող տարվա ընթացքում պարտավորությունների հաշվապահական հաշվեկշռային արժեքը գերազանցում է ակտիվների հաշվապահական հաշվեկշռային արժեքը:

4. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Միեր Անանյանս, ուսումնասիրելով «Գլոբալ Լիֆտ Կոմպլեկտ» ՍՊԸ-ի 17.12.2018թ. բողոքը, «ԵՋԷԿ-ԳՀԱՇՁԲ-18/53» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին վերաբերող փաստաթղթերը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասի 4-րդ կետի համաձայն՝ մասնակիցը պետք է բավարարի հրավերով սահմանված որակավորման չափանիշները:

Մասնակիցը պետք է ունենա պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար հրավերով պահանջվող ֆինանսական միջոցներ:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարը էլեկտրոնային փոստի միջոցով Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե (այսուհետ՝ կոմիտե) հարցում է ներկայացնում առաջին տեղն զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով մասնակցի անվանումը և հարկ վճարողի հաշվառման համարը:

Կարգի 44-րդ կետի համաձայն՝ Կոմիտեն սույն կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետով նախատեսված հարցումն ստանալու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով տրամադրում է հարցման մասին տեղեկատվություն: Սույն կետով սահմանված ժամկետում կոմիտեից տեղեկատվության չստացման դեպքում մասնակցի ներկայացրած հայտարարությունները համարվում են իրականությանը համապատասխանող: Եթե կոմիտեի կողմից սահմանված ժամկետից ուշ ներկայացված տեղեկատվությամբ արձանագրվում է, որ առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցել է օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ կամ չի բավարարում հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի պահանջները, և պայմանագիրը կնքված չէ, ապա տվյալ մասնակցի հայտը մերժվում է: Եթե սահմանված ժամկետում տրամադրված տեղեկատվության արդյունքում մասնակցի ներկայացրած հայտարարությունը որակվում է իրականությանը չհամապատասխանող, ապա հայտերի գնահատման նիստում հանձնաժողովի որոշմամբ տվյալ մասնակցի հայտը մերժվում է՝ անկախ մասնակցի կողմից կոմիտեի տրամադրած տեղեկատվությունից տարբերվող տեղեկատվություն ներկայացվելու հանգամանքից: ***<u>Սույն կետով նախատեսված որակավորման չափանիշի</u>***

գնահատման ժամանակ հաշվի է առնվում սույն կարգի 47-րդ կետով նախատեսված ընթացակարգը:

Կարգի 47-րդ կետի համաձայն՝ առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից փաստաթղթերն ամբողջական չներկայացվելու, ինչպես նաև ներկայացված՝ ներառյալ կոմիտեի կողմից տրամադրված որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերի, իսկ ապրանքների գնման դեպքում նաև սույն կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթղթի գնահատման արդյունքում հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ արձանագրվելու դեպքում հանձնաժողովի քարտուղարը նույն օրն էլեկտրոնային եղանակով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը: «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի մասով արձանագրված անհամապատասխանությունը կարող է շտկվել ինչպես առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից կոմիտեից ստացված գրավոր տեղեկատվությունը գնահատող հանձնաժողովին ներկայացմամբ, այնպես էլ կոմիտեի կողմից տրված նոր տեղեկատվությամբ: Ընդ որում, գնահատող հանձնաժողովի կամ քարտուղարի կողմից կոմիտեին կրկնակի հարցում չի կատարվում:

Նույն կարգի 48-րդ կետի համաձայն՝ առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից արձանագրված անհամապատասխանությունը սահմանված ժամկետում՝

1) շտկելու դեպքում հայտը գնահատվում է բավարար և առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը հայտարարվում է ընտրված մասնակից.

2) չշտկելու դեպքում հանձնաժողովի որոշմամբ հայտը մերժվում է, և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացվում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

Կարգի 63-րդ կետի 1-ին ենթակետի «բ» պարբերության համաձայն՝ մասնակիցների՝ օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասի 4-րդ կետով նախատեսված՝ «Ֆինանսական միջոցներ» չափանիշը գնահատվում է հետևյալ կարգով՝

1) հրավերով պահանջվում է, որ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակիցը, բացառությամբ անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձի, հայտով ներկայացնում է հայտարարություն այն մասին, որ իր կողմից

հայտը ներկայացվելուն նախորդող հաշվետու տարվա ընթացքում պարտավորությունների հաշվեկշռային արժեքը չի գերազանցել ակտիվների հաշվեկշռային արժեքը:

«Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ի կողմից «Երևանի Ջերմաէլեկտրակենտ-րոն» ՓԲԸ-ի կարիքների համար կարիքների համար վերելակների ձեռքբերման, մոնտաժման, նախագծման, գործարկման և կարգաբերման աշխատանքների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ԵՋԷԿ-ԳՀԱՇՁԲ-18/53» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով «Գլոբալ Լիֆտ Կոմպլեկտ» ՍՊԸ-ն հայտ է ներկայացրել:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 02.11.2018թ. ժամը 10:00-ի նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ «Գլոբալ Լիֆտ Կոմպլեկտ» ՍՊԸ-ն ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարը Կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետի հիման վրա 02.11.2018թ. համապատասխան հարցում է ներկայացրել ՀՀ պետական եկամուտների կոմիտե Ընկերության վերաբերյալ:

ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 44-րդ կետի հիման վրա 06.11.2018թ. տրամադրված եզրակացության համաձայն՝ ***«Գլոբալ Լիֆտ Կոմպլեկտ» ՍՊԸ-ի հայտը ներկայացնելու տարվան նախորդող տարվա ընթացքում ակտիվների հաշվապահական հաշվեկշռային արժեքը կազմում է 88 555 421 ՀՀ դրամ, իսկ պարտավորությունների հաշվապահական հաշվեկշռային արժեքը՝ 103 764 647 ՀՀ դրամ:***

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 30.11.2018թ. ժամը 10:00-ի նիստի թիվ 5 արձանագրության 1.2-րդ կետով կայացված որոշմամբ «Գլոբալ Լիֆտ Կոմպլեկտ» ՍՊԸ-ի հայտը մերժվել է այն հիմնավորմամբ, որ Ընկերության հայտը ներկայացնելու տարվան նախորդող տարվա ընթացքում պարտավորությունների հաշվապահական հաշվեկշռային արժեքը գերազանցում է ակտիվների հաշվապահական հաշվեկշռային արժեքը:

Այսպես՝ Կարգի 44-րդ կետը սահմանում է, որ ***նույն կետով նախատեսված «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման ժամանակ հաշվի է առնվում սույն կարգի 47-րդ կետով նախատեսված ընթացակարգը:***

Ուսումնասիրելով «ԵՋԷԿ-ԳՀԱՇՁԲ-18/53» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի արձանագրությունները, ինչպես նաև Ընթացակարգի շրջանակներում «Գլոբալ Լիֆտ Կոմպլեկտ» ՍՊԸ-ին ուղարկված ծանուցումներն, արձանագրում եմ, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից «Գլոբալ Լիֆտ Կոմպլեկտ» ՍՊԸ-ի «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշում ակտիվների և պարտավորությունների հաշվապահական հաշվեկշռային արժեքների մասով անհամապատասխանություն արձանագրվելուց հետո Կարգի 47-րդ կետով սահմանված կարգով Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարի կողմից էլեկտրոնային եղանակով չի ծանուցվել Ընկերությանն արձանագրված անհամապատասխանությունը մեկ աշխատանքային օրյա ժամկետում շտկելու անհրաժեշտության վերաբերյալ, այլ գնահատող հանձնաժողովը մերժել է Ընկերության հայտը: Մինչդեռ Կարգի 44-րդ կետը սահմանում է, որ ***նույն կետով նախատեսված որակավորման չափանիշի գնահատման ժամանակ հաշվի է առնվում սույն կարգի 47-րդ կետով նախատեսված ընթացակարգը:***

Կարգի 48-րդ կետի համաձայն՝ առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից արձանագրված անհամապատասխանությունը սահմանված ժամկետում՝

1) շտկելու դեպքում հայտը գնահատվում է բավարար և առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը հայտարարվում է ընտրված մասնակից.

2) չշտկելու դեպքում հանձնաժողովի որոշմամբ հայտը մերժվում է, և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացվում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

Նման պայմաններում գտնում եմ, որ նշված հիմքով մերժելով «Գլոբալ Լիֆտ Կոմպլեկտ» ՍՊԸ-ի հայտը, «ԵՋԷԿ-ԳՀԱՇՁԲ-18/53» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը գործել է ոչ իրավաչափ, քանի որ Ընկերության հայտը մերժվել է առանց կիրառելու Կարգի 47-րդ կետը:

Հաշվի առնելով վերոգրյալը գտնում եմ, որ Ընկերության բողոքը հիմնավոր է և ենթակա է բավարարման:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝

ՈՐՈՇԵՑԻ

«Գլոբալ Լիֆտ Կոմպլեկտ» ՍՊԸ-ի կողմից 17.12.2018թ. ներկայացված բողոքը բավարարել և պարտավորեցնել «ԵՋԷԿ-ԳՀԱՇՁԲ-18/53» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին՝

1. Կիրառել Կարգի 47-րդ կետը և ծանուցել «Գլոբալ Լիֆտ Կոմպլեկտ» ՍՊԸ-ին՝ «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշում արձանագրված անհամապատասխանությունը շտկելու վերաբերյալ.

2. Դադարեցնել 30.11.2018թ. ժամը 10:00-ի նիստի թիվ 5 արձանագրության 1.2-րդ կետով կայացված՝ «Գլոբալ Լիֆտ Կոմպլեկտ» ՍՊԸ-ի հայտը մերժելու մասին որոշումը.

3. Դադարեցնել 06.12.2018թ. ժամը 10:00-ի նիստի թիվ 6 արձանագրության 1.2-րդ կետով կայացված որոշումը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

Գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝ ՄՀԵՐ ԱՆԱՆՅԱՆ